

Ա Ր Չ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն
Երևանի պետական համալսարանի
կենսաբանության ֆակուլտետի գիտական խորհրդի
2018 թ. փետրվարի 7-ին կայացած թիվ 3 նիստի

Գիտական խորհրդի 40 անդամներից նիստին ներկա էին 31-ը:

Օրակարգում՝

- Հեռակա ասպիրանտների թեկնածուական ատենախոսությունների թեմաների և ղեկավարների հաստատման հարցը
- Անվանական կրթաթոշակների շնորհման հարցը
- Աշնանային քննաշրջանի արդյունքների և մարման շրջանի ընթացքի քննարկում / զեկուցող՝ ղեկանի տեղակալ Կ.Ա.Ղազարյան/
- Տեղակատվություն բակալավրիատի նոր ուսումնական պլանների և կրթական ծրագրերի մասին /զեկուցող՝ մեթոդական խորհրդի նախագահ՝ Կարապետյան Ա.Ֆ./
- Տեղակատվություն ԳՊԿ հայտարարած գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման նպատակով գիտական թեմաների հայտերի մրցույթի մասին
- Ընթացիկ հարցեր

ԼՍԵՑԻՆ՝ կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի հեռակա ուսուցման ասպիրանտ Անահիտ Վարդանի Մամիկոնյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցը:

ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՎ՝ կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի վարիչ՝ ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պրոֆ. Ա.Հ.Թռչունյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ հաշվի առնելով ամբիոնի կարծիքը՝

1. հաստատել Անահիտ Մամիկոնյանի թեկնածուական ատենախոսության թեման՝ «Լ-արգինինի նյութափոխանակության որոշ ֆերմենտների ակտիվության կարգավորումը կրծքագեղձի քաղցկեղի փորձարարական մոդելում», Գ.00.04 «Կենսաքիմիա» մասնագիտությամբ,

2. գիտական ղեկավար հաստատել ՀՀ ԳԱԱ թղթ.անդամ, կ.գ.դ., պրոֆ. Ա. Հ. Թռչունյանին:

ԼՍԵՑԻՆ՝ բուսաբանության և սնկաբանության ամբիոնի հեռակա ուսուցման ասպիրանտ Էմմա Սերգեյի Բոյաջյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցը:

ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՎ՝ բուսաբանության և սնկաբանության ամբիոնի վարիչ՝ պրոֆ. Ս.Գ.Նանագյուլյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ հաշվի առնելով ամբիոնի կարծիքը՝

1. հաստատել Էմմա Բոյաջյանի թեկնածուական ատենախոսության թեման՝ «ՀՀ ազգային պարկերի մակրոմիցրոտների ուսումնասիրությունը և մոնիթորինգը», Գ.00.05 «Բուսաբանություն, սնկաբանություն, էկոլոգիա» մասնագիտությամբ,

2. գիտական ղեկավար հաստատել կ.գ.դ, պրոֆ. Ս.Գ.Նանագյուլյանին:

ԼՍԵՑԻՆ՝ Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի դասախոս, գիտաշխատող Մարգարիտա Անդրեյի Թորոսյանի թեկնածուական ատենախոսության թեմայի վերահաստատման հարցը:

ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՎ՝ կենսաֆիզիկայի ամբիոնի վարիչ՝ պրոֆ. Պ.Հ.Վարդևանյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ վերահաստատել Մարգարիտա Թորոսյանի թեման՝ «Հարթ քրոմոֆորով լիզանդների փոխազդեցությունը նուկլեինաթթուների հետ», Գ.00.02 «Կենսաֆիզիկա և կենսաինֆորմատիկա» մասնագիտությամբ:

ԼՍԵՑԻՆ՝ գենետիկայի և բջջաբանության ամբիոնի հեռակա ուսուցման ասպիրանտ Ալիկ Արմենի Անդրեասյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցը:

ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՎ՝ գենետիկայի և բջջաբանության ամբիոնի ամբիոնի վարիչ՝ պրոֆ. Ռ.Մ.Հարությունյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ հաշվի առնելով ամբիոնի կարծիքը՝

1. հաստատել Ալիկ Անդրեասյանի թեկնածուական ատենախոսության թեման՝ «Արագացված էլեկտրոններով ճառագայթման գենետիկական էֆեկտները մարդու բջիջներում», Գ.00.15 «Գենետիկա» մասնագիտությամբ,

2. գիտական ղեկավար հաստատել ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, կ.գ.դ, պրոֆ. Ռ.Մ.Հարությունյանին:

ԼՍԵՑԻՆ՝ Նորայր Սիսակյանի անվան անվանական կրթաթոշակի շնորհման հարցը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Ն. Սիսակյանի անվան կրթաթոշակը շարունակել հատկացնել կենսաբանության ֆակուլտետի չորրորդ կուրսի ուսանող Սահակ Աշոտի Եղիազարյանին՝ հաշվի առնելով նրա բարձր առաջադիմությունը և ակտիվ մասնակցությունը գիտահետազոտական և հասարակական աշխատանքներին:

ԼՍԵՑԻՆ՝ Լևոն Օրբելու անվան անվանական կրթաթոշակի շնորհման հարցը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Լևոն Օրբելու անվան կրթաթոշակը հատկացնել կենսաբանության ֆակուլտետի երրորդ կուրսի ուսանողուհի Տաթևիկ Ստեփանյանին՝ հաշվի առնելով նրա բարձր առաջադիմությունը և ակտիվ մասնակցությունը գիտահետազոտական և հասարակական աշխատանքներին:

ԼՍԵՑԻՆ՝ ՀՀ ԿԳՆ Գիտության պետական կոմիտեի ՀՀ պետական բյուջեից գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման նպատակով գիտական թեմաների հայտերի մրցույթի մասին :

ՈՐՈՇԵՑԻՆ՝ մրցույթին մասնակցելու համար երաշխավորել հետևյալ նախագծերը.

1. «Օրգանական թափոններից դեպի կենսաջրածին. թափոնների նախամշակումը և մանրէներում H₂-ի արտադրության խթանման գործընթացների կարգավորումը», ղեկավար՝ կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի վարիչ, կ.գ.դ. Ա.Ն.Թռչունյան,
2. «Արքեաների կենսաբազմազանությունը և էկոլոգիական գործառույթը Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի երկրաջերմային աղբյուրներում», ղեկավար՝ մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի դոցենտ, կ.գ.թ. Հ.Հ.Փանոսյան
3. «Գենասենսորի ազդանշանի փոփոխության վրա լիզանդի ազդեցության ուսումնասիրությունը», ղեկավար՝ կենսաֆիզիկայի ամբիոնի պրոֆեսոր, կ.գ.դ. Պ.Ն.Վարդևանյան,
4. «Հակաուռուցքային դեղամիջոցների արդյունավետության բարձրացման քրոմատին-կախյալ ուղու առանցքային ֆերմենտների ակտիվության կարգավորումը» թեմայի երաշխավորության հարցը», ղեկավար՝ կենսաֆիզիկայի ամբիոնի դոցենտ, կ.գ.թ. Ի.Գ.Արծրունի,
5. «Հայաստանի պահպանվող տարածքներում կենսաբազմազանության մոնիթորինգային ծրագրերի իրականացման համար կենսացուցիչների որոշում», ղեկավար՝ բուսաբանության և սնկաբանության ամբիոնի վարիչ, պրոֆ. Ս.Գ.Նանագյուլյան,
6. «Արարատյան դաշտում ստորերկրյա ջրերի որակի և հողերի աղակալման վրա դրանց ազդեցության գնահատումը ոռոգման ջրերի որակի ցուցանիշի (IWQI) և երկրավիճակագրական մեթոդների կիրառմամբ», ղեկավար՝ էկոլոգիայի և բնության պահպանության ամբիոնի դոցենտ, կ.գ.թ. Կ. Ա. Ղազարյան,
7. «Միկոտոքսինների ազդեցությունը տնային հավերի իմունային եվ վերարտադրողական համակարգերի վրա», ղեկավար՝ կենդանաբանության ամբիոնի դոցենտ, կ.գ.թ. Ա.Ֆ.Կարապետյան:

Գիտական խորհրդի նախագահ՝

ՀՀ ԳԱԱ թղթ.անդամ, պրոֆ.

Է.Ս.Գևորգյան

Գիտական խորհրդի քարտուղար՝ դոցենտ

Ա.Ֆ.Կարապետյան